

# ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՇԻՆ

## ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. Էջմիածին, 26 Ապրիլ 1988 թ.

Մայր Աթոռիս Դիւանը լիազօրութեամբ է հաղորդելու Հայ Առաքելական Եկեղեցու կենտրոններին, հոգեւոր դասին եւ հաւատացեալ ժողովրդին, քէ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. ի դիմումներին ընթացք տալով, Սովեական Հայաստանի սլետական իշխանութեան որոշումով՝ Սուրբ Էջմիածնի հոգեւոր իշխանութեանն են յանձնուում՝ Դորիսի Երջանի Տաթելի Սուրբ Աստուածածին վանքը (Ժ. դար) եւ Իջեւանի Սուրբ Մակարաւանքը (Ժ.Դ. դար), որպէս յետ այսու գործող ուխտատեղիներ, ի միախառնութիւն հայրենի հաւատացեալներին:

ԳԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ

Հայերէնի եւ ազգային պատմութեան դասընթացքը, զոր Տ. Աստղիկ Վարդապետ սկիզբէն առաջադրած էր կազմակերպել Խարպինի մէջ, պատկուած է զեղեցիկ յաջողութեամբ: Երկու սեռէ պատանիներ եւ երիտասարդներ ուրախութեամբ կը հետեւին անոր: Հայերէն խօսելու տենչը հրաշքաւոր է ամէնքը: Երբեմն հանդիսական երեկոյթներ եւ տեղի կ'ունենան. տարէցներն ալ սկսած են խօսիլ արդէն Հայերէն, զոր մօտցեր էին երկար տարիներէ ի վեր: — Հոկտեմբեր 24ին, Թարգմանչաց տօնին առիթով, կատարուեր է գրական եւ զեղարուեստական հանդէս՝ «Հայ Մշակոյթի Օր» անուան տակ, Եկեղեցւոյ յարակից՝ ազգային տան սրահին մէջ:

Հակառակ պատերազմական վիճակին, ամէն կողմէ կը փափաքին որ Հոգեւոր Հովիւը այցելէ իրենց: Ամէնքը կը սիրեն զինքը իր բարի սրտին եւ անձնանուէր եւ խղճամիտ հոգւոյն եւ աշխատասիրութեան համար: — Յաւաքը երբեմն կ'իջնէ եղեր հոն մինչեւ 45 աստիճան զերոյէն վար, իսկ առ հասարակ՝ 25-30, բայց հոր եւ տառաջը ցուրտ մը, որ կաղզուի է անոնց համար մանուշակ՝ որոնք հեն տառապիր սիրտէ:

Անցնող Դեկտ. 8ին, Նոր Զուգայի մէջ վախճանած է տեղւոյն հոգեւորական. ներէն երիցադոյնը, Տէմեայ Տ. Մաշթոց Աւագ Բհնյ. Իսրայէլեան, մօտ կիսադարեան ժահանջադործութենէ վերջ: Ծնած է ի Նոր Զուգա 1853ին, աւագանի անուանով Յովսէփ:

Հանգուցեալը հայրն է Ս. Աթոռոյս ամենէն անձնոր ժիարաններէն Հոգւ. Տ. Կիրեղ Վարդ. ին (հաւագային, 1944-49, վաղամեակի Պատրիարքը Ս. Աթոռոյ — Ծ. Խ.), զոր եւ իրաւամբ կը նկատէր իր պարծանքը, եւ որուն հգոհացուած կաթ. տօնը էր որ մեկնեցաւ այս աշխարհէն: — Մահուան դոյժը հեռագրաւ ստանալուն պէս, Ս. Պատրիարք Հայրը, որ անձամբ ճանչցած էր զինքը Հնդկաստան, եւ իր ձեռքէն ընդունած էր զաւակը ի ծառայութիւն Եկեղեցւոյ, Պատրիարքարանի իր սենեակին մէջ հաւաքեց Միաբանութիւնը եւ ամէնուն ներկայութեան պատշաճ կերպով իրազեկ ըրաւ իր զաւակը տխուր իրողութեան: Հայր Կիրեղ՝ Սրբազան Հօր եւ իր ժիարանակից եղբայր ցաւակից արտայայտութեանց մէջ զովացուց հայրիկին կսկիծին այրուցքը:

(Նոյն, էջ 93-95):